

կասկած, յետադիմական է, ոչաքսիոն, որովհետեւ կը քանդէ անտեսութիւնը եւ ամենուրեք կը ձգէ աշխատանքի արտադրողականութեան աստիճանը: Մինչդեռ ազգային ազատագրութեան տեսակէտով կոմունիստները Արեւելքի մէջ, ընդհանուր առմամբ, յեղափոխական դեր կը կատարեն:

Մէկ կողմ դրէք ազգային անկախութեան համար հասունցած եւ ազգային անկախութեան տիրացած ազգութիւնները, ինչպէս, օրինակ, հայերն ու վրացիները, վերջուցէ՛ք Արեւելքի միւս ժողովուրդները, ինչպէս, օրինակ, ռուսական լուծի տակ ապրող բազմաթիւ մոնղոլական ցեղերն ու ազգութիւնները, եւ դուք կը տեսնէք, թէ որքան մեծ դարկ են տուած բոլշեւիկները անոնց ազգային ինքնագիտակցութեան, ինքնամփոփման եւ քաղաքական կազմակերպման:

Եթէ մեզի՝ հայերուս կամ վրացիներու համար ծանր է, անտանելի բոլշեւիկեան սեփմը, որովհետեւ բոլշեւիկները մեզ զրկեցին կատարեալ ազատութենէ ու անկախութենէ, սակայն Ռուսիոյ խորքերուն մէջ ապրող բազմաթիւ այլ ժողովուրդներուն, որոնք ազգային տեսակէտով խորը քնի մէջ էին, բոլշեւիկները տուին կէս-ազատութիւն մը, որ հնարաւորութիւն կուտայ անոնց ազգայնօրէն զարգանալ ու հասուննալ իսկական եւ կատարեալ ազատութեան համար: Եթէ Խորհրդային ինքնավարութիւնը մեզ էի բաւարարեր արդէն, կան շատ մը ազգութիւններ սակայն, որոնց համար այդ տեսակի կիսատ ինքնավարութիւնն անգամ մեծ առաջադիմութիւն է:

Անկախ իրենց կամքէն ու հակառակ իրենց նպատակներուն, բոլշեւիկները կը կազմակերպեն ու առաջ կը մղեն Արեւելքի այլազան յետամնաց ժողովուրդներու ազգային ազատագրական շարժումը:

Խորհրդային այն բազմաթիւ հանրապետութիւններն ու ինքնավարութիւնները, զորս անոնք ստեղծած են Ռուսիոյ մէջ, կորիզներն են ապագայ անկախ պետութեանց զոյացման համար:

Նոյն ազգային յեղափոխականացնող դերը բոլշեւիկները կը կատարեն նաեւ Ռուսիոյ սահմաններէն դուրս Արեւելքի այլեւայլ երկիրներու մէջ: Կը ճատեն համաշխարհային

ընկերվարական յեղափոխութեան անունով, բայց իրօք յետամնաց եւ տկար ազգերը ոտքի կը կանգնեցնեն դրամատիրական մեծ պետութեանց դէմ: Կը խօսին պրոլետարիատի անունով, սակայն իրօք ազգերը պայքարի կը մղեն յանուն իրենց քաղաքական ազատութեան:

Ոչ պատերազմը, ոչ ալ յեղափոխութիւնը (Ռուսիոյ, Գերմանիոյ մէջ եւ այլուր) բազմաթիւ խաղաղութիւնը չտուին մարդկութեան:

Չորս տարուայ ջանքերը վերահաստատելու խաղաղութիւնը ոչ միայն սպարդիւն մընացին, այլ, ընդհակառակը, կարծես աւելի եւս սաստկացուցին ահռելի այն քառսը, որ կը տիրէ աշխարհի մէջ պատերազմէն ի վեր:

Մարդկութեան սպրած տաղնապը շատ աւելի խորն է եւ լուրջ, քան այն միջոցները, որ կը դորձադրուին տաղնապը վերացնելու համար: Եւ կարելի է վստահարար ընել, թէ տեսական խաղաղութիւնը անկարելի պիտի լինի վերականգնել մինչեւ այն ատեն, երբ վերջին պատերազմի եւ յեղափոխութեանց հետեւանքով արթնցած եւ շարժման մէջ դըրուած ազգերը, բոլորն ալ, ձեռք չբերեն ազատութիւն եւ անկախութիւն:

Ոչ մէկ ազգութիւն, ամենայնպէս ու ամենատկարն անգամ, չի ուզեր այլեւս ապրիլ օտարի բռնակալ իշխանութեան տակ: Ամէն մէկ ազգ կ'ուզէ լինել ազատ եւ ինքնիշխան. ամէն ազգ կ'ուզէ իր ազատ կամքով անօրինել իր բախտը, ուղղել իր կեանքը:

Ինչպէս անհատը, այնպէս ալ ազգութիւնը կը ձգտի իր յարաբերութիւնները ուրիշ անհատներու եւ ազգերու հետ հիմնել ազատ համաձայնութեան եւ փոխադարձ իրաւախոհութեան բանական հիմունքներու վրայ եւ ոչ թէ բռնութեան եւ բիրտ ոյժի վրայ: Տիրապետութիւնը զէնքի, բռնութեան միջոցով զարձեր է արդէն անհանդուրժելի, ապարդիւն եւ ապաժամ՝ ոչ միայն անհատներու, այլեւ ազգութեանց համար: Ազատութիւնը թէ անհատներու եւ թէ ազգութեանց համար դարձեր է տնտեսական անհրաժեշտութիւն: Որովհետեւ արդիւնաւոր է միմիայն ազատ ոչ խատանքը:

Եւ, ինչպէս որ կապիտալիստական տնտեսութիւնը իր զարգացման սկզբնական շրջանին մէջ քանդեց աւատական, միջնադարեան բո-